ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
«ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան «01» « 08 » 2022թ.

Ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝

Վանուշ Իսկանդարյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ (հանձնաժողովի նախագահ, ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝

Վահե Խաչատրյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Լևոն Մանասարյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառա-վարչության վարչատնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Սոսե Հակոբյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավար-չության ավագ մասնագետ (ԳՊ/ ԲԱ)

Գրիգոր Ծատինյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառա-վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պարետ (ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝

Նաիրա Մկրտչյան - Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ

---

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

1.1 «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2022 թվականի օգոստոսի 01-ին ժամը 11:00-ին էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը /անվանումը և էլեկտրոնային փոստի հասցեն/:

N	Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	հեռախոս
1	«ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ	proekt800@inbox.ru	041 038 000

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), համապատասխան կազմված լինելու մասին

2.1 «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ընթացակարգի միակ մասնակցի՝ «ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

- Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի
- Հայտի ապահովում՝ կանխիկ վճարման հանձնարարականի անդորրագիր
- Ծավալաթերթ-նախահաշիվ
- Իրական շահառուների մասին հայտարարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի

- Գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի

2.2. Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են, սակայն չեն համապատասխանում « ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), քանի որ փաստաթղթերը՝ ներառյալ գնային առաջարկը ստորագրված են լիազորություն չունեցող անձի կողմից:
Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/12» ծածկագրով ընթացակարգի բացման և գնահատման գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 «ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

3.2 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունը՝

Նախագահ՝	Վ. Իսկանդարյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Վ. Խաչատրյան	ԳՊ/ԳԱ	
	Լ. Մանասարյան	ԳՊ/ԳԱ	
	Ս. Հակոբյան	ԳՊ/ԲԱ	
	Գ. Ծատինյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ն. Մկրտչյան	ԳՊ/ՄՀմ	